ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 500 - Ա **06 հոկտեմբերի 2021 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունվարի 23-ի N 30-Ա հրամանի պահանջները

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում գործող ծառայությունների և կազմակերպությունների փոխհամագործակցության կատարելագործման նպատակով 2021թ. հոկտեմբերի 12-ին անցկացնել արտապլանային ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպումը խոշոր ավտովթարի դեպքում » թեմայով:
2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Գ. Գալստյանին:
3. Ուսումնավարժությունը նախապատրաստելու և անցկացնելու համար ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով՝

- փ/ծ փոխգնդապետ Գ.Հակոբյան - ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ պետի տեղակալ՝ շտաբի պետ,
- փ/ծ կապիտան Լ. Պիպոյան - ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ ավագ հրահանգիչ

4.Ուսումնավարժության ղեկավարման շտաբում ստեղծել գործնական միջոցառումների կազմակերպման խումբ հետևյալ կազմով՝

- փ/ծ մայոր Ա.Սիմոնյան - ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ ավագ հրահանգիչ,
- փ/ծ ավագ լեյտենանտ Կ. Աբրահամյան - ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ,
- փ/ծ փոխգնդապետ Ա.Բարսեղյան – ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 31 ՀՓՋ-ի հրամանատար,
- փ/ծ մայոր Ա. Խաչատրյան - ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 31 ՀՓՋ-ի հրամանատարի տեղակալ:

5. ՈՒսումնավարժության ընթացքին հետևելու համար ստեղծել դիտորդական խումբ հետևյալ կազմով՝

- Հարությունյան- Գեղարքունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
- Լ. Վարդանյան- Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
- Տ.Հակոբյան – Մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ
- Ա. Առաքելյան- ԱԻՆ վետերան /համաձայնությամբ/,
- Վ. Մարդոյան- ԱԻՆ վետերան /համաձայնությամբ/:

6. ՈՒսումնավարժությանը ներգրավել ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությանը, ՀՀ ոստիկանության Գավառի բաժնին, «Գավառի ԲԿ»ՓԲԸ աղետների բժշկության և Գավառի ԳԳՄ վթարավերականգնողական խմբերին և Գավառի պետական բժշկական քոլեջի 2-րդ կուրսի ուսանողներին:

7. Հաստատել ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանը՝ համաձայն հավելվածի:

8. ՈՒսումնավարժության ղեկավար, փ/ծ գնդապետ Գ. Գալստյանին՝

1) կազմակերպել ուսումնավարժությանը նեգրավված ուժերի նախապատրաստումը՝ համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանի, ապահովել ուսումնավարժության պատշաճ անցկացումը:

2) կազմակերպել համագործակցություն ներգրավված ուժերի միջև:

3) ուսումնավարժության անցկացումից հետո հնգօրյա ժամկետում ինձ ներկայացնել անցկացման վերաբերյալ ամփոփագիր:

9. ՈՒսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները, մասնակից ուժերը համալրել անձնակազմով և գույքով:

2) պատրաստ լինել ուսումնավարժության ընթացքում համապատասխան գործողությունների իրականացմանը:

3) Գործնական միջոցառումներ իրականացնելիս խստագույնս պահպանել անվտանգության կանոնները:

10. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ռ.Նավոյանին:

11. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

06.10.2021

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
500-ա
որոշման

ՕՐԱՑՈՒՅԱՅԻՆ ՊԼԱՆ
ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողներ	Նշ.կատարման մասին
1	2	3	4	5
Փաստաթղթերի մշակում				
1.	Ելակետային տվյալների որոշում. վայր, մտահղացում, անցկացման կարգ	Մինչև 03.10	Ուսումնավարժության ղեկավար, Ղեկավարման շտաբի պետ	
2.	ՀՏՈՒ մտահղացման մշակում	Մինչև 04.10	Ղեկավարման շտաբի պետ	
3.	ՀՏՈՒ անցկացման պլանի մշակում	Մինչև 04.10	Ղեկավարման շտաբի պետ	
4.	ՀՏՈՒ-ի փաստաթղթերի համաձայնեցում	Մինչև 05.10	Ղեկավարման շտաբի պետ	
5.	ՀՏՈ փաստաթղթերի հաստատման ներկայացում	Մինչև 06.10	Ղեկավարման շտաբի պետ	
Ղեկավար կազմի նախապատրաստում				
6.	ՀՏՈՒ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի ծանոթացում մասնակիցներին	Մինչև 10.10	Ուսումնավարժության ղեկավար, Ղեկավարման շտաբի պետ	
8.	Մասնակիցների հետ պարապմունքի անցկացում «Հրդեհաշիջումը և տուժածների դուրս բերումը վթարված ավտոմեքենաներից» թեմայով	10.10 11.10	Ուսումնավարժության ղեկավար, Ղեկավարման շտաբի պետ	
Ուսուցանվողների նախապատրաստումը				

8.	Գավառի թիվ 31 ՀՓՁ մասնակիցների հետ վարժանքի անցկացում «Հրդեհաշիջումը և տուժածների դուրս բերումը վթարված ավտոմեքենաներից» թեմայով	Մինչև 11.10	Ստորաբաժանման հրամանատար	
9.	Անձնակազմին անվտանգության կանոնների հետ ծանոթացում և ստուգարքի ընդունում	Մինչև 11.10	Ստորաբաժանման հրամանատար	
Ուսումնավարժության գործնական տեղամասերի նախապատրաստում				
10.	Ուսումնավարժության վայրի տեղազննում	Մինչև 11.10	Ուսումնավարժության ղեկավար, Ղեկավարման շտաբի պետ	
11.	Տեղամասերի նախապատրաստում	Մինչև 12.10	Ղեկավարման շտաբի պետ	

06.10.2021

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ